ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 11

18 ՀՈՒՆԻՍԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու արտահերթ նիստին ներկա էին 11 ավագանու անդամներ ՝ Խաչիկ Վարդանյանը, Ռուսլան Օհանյանը, Աիդա Սարգսյանը, Նարեկ Նալբանդյանը, Դավիթ Մուրադյանը, Գոհար Պառավյանը, Սերյոժա Այվազյանը,Արսեն Գրիգորյանը, Վրույր Այվազյանը, Արտյոմ Տոնոյանը, Թամարա Գրիգորյանը,

Բացակա էին՝ Վարսենիկ Քալաշյանը, Համլետ Գևորգյանը, Տիգրան Արոյանը, Ալիկ Սարգսյանը:

Նիստին մասնակցում էին վարչական ղեկավարներ՝ Ա.Մագթաղյանը, Հ. Վարդանյանը Գոռ Աղաջանյանը Կարեն Լալազարյանը, Մարտին Ալավերդյանը,համայնքապետարանի աշխատակիցներ ՝

Ա.Մարիկյանը, Ս.Սուքիասյանը, Ա.Դավոյանը:

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Խաչիկ Վարդանյանը:</u>

<u>Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Սերինե Նալբանդյանը</u>:

Օրակարգում՝

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու նիստի օրակարգը հաստատելու մասին:
/Զեկ.Խ. Վարդանյան/
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:
/զեկ. Ս.Սուքիասյան/
3.ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
/ԶԵԿ.Ս.Սուքիասյան/
4.ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի 25 օրյա վարժական հավաքներին մեկնած զինապարտների ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:
/ԶԵԿ.Ա.Դավոյան/
5.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի նորածիններ ունեցող և հարազատին կորցրած ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:
/Զեկ. Ա. Դավոյան/
6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:
/զեկ. Ա.Դավոյան/
7. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Կուրթան բնակավայրի դպրոցին դրամաշնորհ տրամադրելու մասին:
/Ռ.Օհանյան/

8.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության տալու մասին:
/Զեկ.Ռ.Օհանյան/
9. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 17-ի թիվ 46-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
/Զեկ.Ռ.Օհանյան/
10. Վարձակալության իրավունքով տրամադրված 06-093-0143-0013 և 06-093-0143-0001 ծածկագրերի տակ գտնվող հողամասերը վարձակալին ուղղակի վաճառքով վաճառելու մասին:
/Զեկ.Ռ.Օհանյան/
11. Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին:
/Զեկ. Ռ.Օհանյան/
12. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 2024թվականի ապրիլի 26-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
/Զեկ.Ս.Նալբանդյան/
13. Գյուլագարակ համայնքի ավագանու հաջորդ նիստ հրավիրելու մասին:
/ԶԵԿ.Ս.Նալբանդյան

Լսեցին՝
/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Խ.Վարդանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.
1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 2024թ. հունիսի 18-ի հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
ԿՈՂՄ-11, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 51-Ա

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027 ԹԹ. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ.Ս.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթներով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին **որոշում է**.

1.Հաստատել Գյուլագարակ համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԿՈՂՄ-11, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 53-Ն/

Լսեցին՝

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՋԵԿ.Ս.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի
5-րդ կետով, ՀՀ «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.
1.Հաստատել Գյուլագարակ համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեում կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԿՈՂՄ-11, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 53-Ն/

Լսեցին՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 25 ՕՐՅԱ ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻՆ ՄԵԿՆԱԾ ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՋԵԿ.Ա.ԴԱՎՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման նպատակով դիմումների քննարկման հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 14-Ա որոշումը՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.
1. Համայնքի բյուջեից՝
25-օրյա վարժական հավաքներին մեկնած զինապարտների ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:
ԿՈՂՄ-11, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 55-Ա/
Լսեցին՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱԾԻՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՎ ՀԱՐԱՁԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՋԵԿ.Ա.ԴԱՎՈՅԱՆ/

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման նպատակով դիմումների քննարկման հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 14-Ա որոշմանը համապատասխան,հիմք ընդունելով համայնքի բնակիչների դիմումները, ինչպես նաև համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ

խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննող հանձանժողովի եզրակացությունը՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից

ա/ նորածիններ ունեցող ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն/ համաձայն թիվ 01 հավելվածի

բ/ հարազատին կորցրած ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն համաձայն թիվ 02 հավելվածի:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԿՈՂՄ-11, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 56-Ա/
Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՋԵԿ.Ա.ԴԱՎՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման նպատակով դիմումների քննարկման հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 14-Ա որոշմանը համապատասխան,հիմք ընդունելով համայնքի բնակիչների դիմումները, ինչպես նաև համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննող հանձանժողովի եզրակացությունը՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումներրը և համայնքի բյուջեից

սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԿՈՂՄ-11, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 57-Ա/
Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՒՐԹԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԴՊՐՈՑԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՋԵԿ.Ռ.ՕՀԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի

1-ին կետի 6-րդ ենթակետով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքի բյուջեի 4637 հոդվածից Գյուլագարակ համայնքի Կուրթանի միջնակարգ դպրոցին տրամադրել՝ 800 000 /ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ դրամաշնորհ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից

ԿՈՂՄ-11, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 58-Ա/
Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՁԵԿ.Ռ.ՕՀԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով,«Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ և 68-րդ հոդվածներով,«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով,հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը,Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ հավանություն համայնքային սեփականություն հանդիսացող հողերը վարձակալության տալուն

1) 0,50191 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝արոտավայր, 1 /մեկ/ լոտով ծածկագիր 06-029-0144-0082 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 15000/ տասնհինգ հազար / ՀՀ դրամ:

2) 0,22457 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝արոտավայր, 2 /երկու/ լոտով ծածկագիր 06-029-0144-0084 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 10000/ տաս հազար / ՀՀ դրամ:

2.Աճուրդ վաճառքով օտարելուն

1). 1/մեկ/ լոտով 0,41028 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, ծածկագիր 06-029-0070-0053, մեկնարկային գինը 6510000 /վեց միլիոն հինգ հարյուր տաս հազար / ՀՀ դրամ, գնորդի կողմից հողամասում առկա 06-029-0070-0053-001 ծածկագրով 3019,6 քմ մակերեսով կիսաքանդ շինությունը քանդելու նախապայմանով;

2) 2/երկու/ լոտով 0.14609 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝բնակելի կառուցապատման, ծածկագիր 06-029-0081-0001, մեկնարկային գինը 575000 /հինգ հարյուր յոթանասունհինգ հազար / ՀՀ դրամ

3) 3/երեք/ լոտով 0.13498 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝բնակելի կառուցապատման, ծածկագիր 06-029-0081-0002, մեկնարկային գինը 535000 /հինգ հարյուր երեսունհինգ հազար / ՀՀ դրամ

4) 4/չորս/ լոտով 0.16259 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝բնակելի կառուցապատման, ծածկագիր 06-029-0081-0003, մեկնարկային գինը 627000 /վեց հարյուր քսանյոթ հազար / ՀՀ դրամ

5) 5/հինգ/ լոտով 0.12043 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝բնակելի կառուցապատման, ծածկագիր 06-029-0081-0005, մեկնարկային գինը 490000 /չորս հարյուր իննսուն հազար / ՀՀ դրամ

6) 6/վեց/ լոտով 0.13062 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝բնակելի կառուցապատման, ծածկագիր 06-029-0081-0006,

մեկնարկային գինը 517000 /հինգ հարյուր քսան հազար / ՀՀ դրամ

7) 7/յոթ/ լոտով 0.06566 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, ծածկագիր 06-029-0144-0090, մեկնարկային գինը 422000 /չորս հարյուր քսաներկու հազար / ՀՀ դրամ

8) 8/ութ/ լոտով 1.00937 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝խոտհարք, ծածկագիր 06-027-0130-0011, մեկնարկային գինը 570000 /հինգ հարյուր յոթանասուն հազար / ՀՀ դրամ

9) 9/ինը / լոտով 0.01475 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, գործառնական նշանակությունը՝կոմունալ ենթակառուցվածքների, ծածկագիր 06-013-0021-0010 և հողամասում առկա 06-013-0021-0010-001 ծածկագրով 111 քմ մակերեսով կիսաքանդ շինությունը մեկնարկային գինը 1050000 /մեկ միլիոն հիսուն հազար / ՀՀ դրամ

10) 10/տաս/ լոտով 0.84 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝բնակելի կառուցապատման, ծածկագիր 06-093-0033-0015, մեկնարկային գինը 200000 /երկու հարյուր հազար / ՀՀ դրամ

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-3
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 59-Ա/

Լսեցին՝

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի ԹԻՎ 46-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ.Ռ.Օհանյան/

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի

1-ին մասի 3-րդ կետը, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Գյուլագարակ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 17-ի «ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդով օտարելու և վարձակալության իրավունքով տրամադրելու մասին» թիվ 46-Ա որոշման առաջին կետի 9-րդ ենթակետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

2.0.06215 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը խոտհարք 9/ ինը / լոտով ծածկագիր 06-029-0069-0008 , 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 2000 / երկու հազար/ ՀՀ դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-3
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 60-Ա/

Լսեցին՝

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 06-093-0143-0013 և 06-093-0143-0001 ԾԱԾԿԱԳՐԵՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ.Ռ.ՕՀԱՆՅԱՆ/

Հիմք ընդունելով Արմեն Սամվելի Խաչատրյանի դիմումը, համայնքային սեփականությանը պատկանող հողային տարածքի վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագիրը, անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցման թիվ 27022024-06-0064 և 06032024-06-0054 վկայականները կազմված 2024 թվականի փետրվարի 27-ին և 2024թ.-ի մարտի 6-ին ,ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի թիվ 188-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 09-ի թիվ 839-Ն որոշումը , ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, 60-րդ հոդվածի և 66-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով,ՀՀ Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 627 հոդվածով, ՀՀ կառավարության պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ՝ ավագանին որոշում է՝

1.Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գյուլագարակ համայնքի Պուշկինո գյուղում գտնվող՝ Արմեն Խաչատրյանի վարձակալության իրավունքով 25 տարի ժամկետով տրամադրված հողամասը, ՀՀ կառավարության 24,11,2005թ թիվ 2347-Ն որոշմամբ սեփականության իրավունքով փոխանցված է համայնքին որպես Գյուղատնտեսական հնդավոր 06-093-0143-0013 և 06-093-0143-0001 ծածկագրերով, որոնք մասնավորեցման ենթակա հողամասեր են, ընդգրկված չեն ՀՀ Հողայի օրոնսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ուստի առաջնորդվելով վերը նշված օրենքներով գյուղատնտեսական նպատակային նշանակության, հնդավոր գործառնական նշանակության 06-093-0143-0013 ծածկագրի 6.00274 հա հողամասը 9155000 /ինը միլիոն մեկ հարյուր հիսունհինգ հազար / ՀՀ դրամ, 06-093-0143-0001 ծածկագրի 3.11228 հա հողամասը 4750000 /չորս միլիոն յոթ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ ուղղակի վաճառքի ձևով օտարել վարձակալ Արմեն Խաչատրյանին:

2.Արմեն Խաչատրյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել հողամասերն ուղղակի վաճառքով վաճառելու առուվաճառքի պայմանագիր:

3.Իրավունքը ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

ԿՈՂՄ-10, ԴԵՄ-1, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 61-Ա/

Լսեցին՝

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԵՐԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ.Ռ.ՕՀԱՆՅԱՆ/

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2012թ.հունիսի 22 -իթիվ 822 որոշումը, համայնքի բնակիչների դիմումները հողի հարկերի տույժերը զիջելու մասին , Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

Կիրառել՝

1.Հողի հարկի գոյացած տույժի արտոնություններ կուտակված ապառքը ամբողջությամբ և միանգամից մարած բնակչի՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ԿՈՂՄ-11, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 62-Ա/

Լսեցին՝

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի ԹԻՎ 37-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ.Ս. Նալբանդյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ կետերով , Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերին մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը ,որոշում եմ.

1. Գյուլագարակ համայնքի ավագանու 26.04.2024թ. «Գյուլագարակի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքնակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ
37-Ա որոշման հավելվածը խմբագրել նոր բովանդակությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԿՈՂՄ-11, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 63-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ջեկ.Ս.Նալբանդյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և նույն օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Գյուլագարակ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանել սեպտեմբերի 10- ը, ժամը՝ 10:00
ԿՈՂՄ-11, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 64-Ա/

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔՐՏՈՒՂԱՐ՝ ՍԵՐԳԵՅ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ